

ՀԱՎԵԼՎԱԾ

Ատոմ Շ. Մարգարյան

Տնտեսագիտ. թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԳԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԼՃԱՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԾԻՆ

Հետահայաց տնտեսաքաղաքական համադրումներ
թագավարակի և Արցախյան երկրորդ պատերազմի
համապատկերին *

Բանալի բառեր – արդիականացում, լճացում, թագավարակ, պատերազմ, ազատական բարեփոխումներ, ռազմական ծախսեր, գլոբալ աշխարհ, նյութական կորուստներ, ներդրումներ:

Մուտք

ԽՍՀՄ փլուզումը և Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը, լինելով չափազանց կարևոր երկրի ինքնիշխանության վերականգման ու զարգացման հնարավորությունների առումով, միևնույն ժամանակ մեզ համար լրջագույն մարտահրավերների սկիզբը դարձան:

Մարտահրավեր էր առաջին հերթին 1988 թ. դեկտեմբերյան երկրաշարժը, ինչը տասնյակ հազարավոր զոհերի, հարյուր հազարավոր անօթևան մնացած մարդկանց և հսկայական նյութական կորուստների պատճառով ծանր վիճակ էր ստեղծել Հայաստանում: Այս համապատկերին տեղի ունեցավ ԽՍՀՄ կազմաքանդումը և այն կազմող հանրապետությունների անկախացումը, որը Հայաստանին զրկեց նախկին կայսրության կենտրոնացված ֆինանսական ռեսուրսներից օգտվելու հնարավորություններից: Ավելին՝ քիչ ավելի ուշ պայթած Արցախյան առաջին պատերազմն ու դրա հետևանքով Թուրքիայի և Ադրբեջանի կողմից տրանսպորտային և էներգետիկ շրջափակումը էլ ավելի բարդացրին ՀՀ վիճակը՝ դառնալով տասնամյակների վնասների ու լրջագույն կորուստների աղբյուր: Մինչդեռ Արցախյան պատերազմն ավարտվեց ոչ թե խաղաղության պայմանագրով, այլ ժամանակավոր զինադադարով, ինչը նշանակում էր երկրի զար-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 27.12.2020:

գացման համար ծայրահեղ անբարենպաստ պայմանների տևականություն ու շարունակականություն: Այս հանգամանքը պահանջում էր ահռելի հավելյալ մարդկային և նյութական ռեսուրսներ, ֆինանսական միջոցներ:

Ըստ էության, վերը նկարագրված իրողություններն էին այն ելակետային պայմանները, որոնք հարկադրեցին 1990-ականներին ընտրել այսպես կոչված ազատական բարեփոխումների և ինստիտուցիոնալ փոխակերպումների ուղեգիծը, որը հետագա տասնամյակների համար մեծ հաշվով հանգեցրեց ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Արցախի քաղաքական, հասարակական և տնտեսական համակարգերի ձևախեղումներին: Դա այն պարագայում, երբ դեռևս որևէ կերպ լուծված չէր արցախյան հիմնահարցը, Հայաստանը գտնվում էր դաժանագույն շրջափակումների և էներգետիկ ահաբեկչության ճիրաններում, երբ տնտեսության հիմնական ոլորտների ու ճյուղերի, արտադրական ձեռնարկությունների գերակշիռ մասը գրկվել էր հումքի մատակարարման աղբյուրներրից ու վաճառահանման շուկաներից: Բնականաբար, այս ամենը հանգեցրել էր զանգվածային գործազրկության, եկամուտների անկման ու բնակչության բացարձակ մեծամասնության աղքատության:

Ստեղծված իրավիճակից բխող քայլերը և գործողությունները նորանկախ Հայաստանի երիտասարդ ու կառավարման փորձ չունեցող իշխանությունների համար ավելի շուտ ոչ թե մտածված ու կշռադատված հեռահար կանխատեսումների ու հավասարակշռված լուծումների ամբողջություն էին, այլ իրավիճակից բխող իրադրային փորձարարությունների հավաքածու: Այս առումով ընդունվող որոշումների մեծ մասը բոլոր տեսակետներից (քաղաքական, իրավական, տնտեսական, սոցիալական և այլն) իրավիճակը մի կերպ կառավարելի պահելու գործողություններ էին:

1. 1990-ական թվականների ազատական բարեփոխումները և սեփականության վերաբաշխումները

Այսօր շատ փորձագետներ կան քաղաքական գործիչներ, հետահայաց գնահատելով նորանկախ Հայաստանի առաջին տասնամյակի իրողությունները, հաճախ ֆետիշացնում և գերագնահատում են այդ ժամանակահատվածի քաղաքական իշխանությունների քայլերն ու գործողությունները: Սակայն ավելի քան երկու տասնամյակների հեռավորությունից արժևորելով հեռավոր 1990-ական թվականների իրավիճակն ու իրականացված վերափոխումները՝ ակնհայտ է դառնում, որ տևական շրջան Հայաստանում ու Արցախում չեն ձևավորվել քաղաքական, իրավական, տնտեսական և ինստիտուցիոնալ այն համակարգերը, որոնք փոխլրացնելով միմյանց, կստեղծեին իրավաքաղաքական առումով կենսունակ, տնտեսա-

կան ու սոցիալական առումներով զարգացող ու արդիականացող պետական կազմավորումներ: Ճիշտ հակառակը՝ ստեղծվել են կլանային շահերի հետևողական ժառանգորդության վրա հիմնված խմբիշխանական-օլիգարխիկ համակարգեր, որոնց մոդելները ամենևին կենսունակ ու մրցունակ չէին (և չեն) քաղաքակիրթ աշխարհի չափանիշներով:

Կարելի է փաստել, որ զուտ ձևական առումով 1990-ական թվականների ՀՀ-ական իշխանությունները անում էին քայլեր, որոնք արտաքուստ երկիրը տանում էին ժողովրդավարության, ազատականության և առաջադիմության ճանապարհով: 1995 թ. ընդունված ՀՀ Սահմանադրության մեջ հռչակված էին քաղաքակիրթ աշխարհի բոլոր հիմնարար արժեքներն ու նորմերը¹: Այդ ամենի կենսագործումը պետք է երկիրը դարձներ արդիական ու բարգավաճ տերություն՝ մրցունակ տնտեսությամբ ու բարեկեցիկ բնակչությամբ: Ընդ որում, երկրում տեղի ունեցող իրավաքաղաքական և ինստիտուցիոնալ փոխակերպման գործընթացները ընթանում էին միջազգային տարատեսակ կառույցների, եթե կարելի է այդպես ասել՝ խնամատարությամբ ու խորհրդատվությամբ: Դա հատկապես վերաբերում էր ինստիտուցիոնալ ու տնտեսական բարեփոխումներին: Այս հանգամանքը իր խորքային պատճառներն ուներ: Գլխավոր պատճառը, իհարկե, տնտեսության ու հանրային կյանքի բոլոր ոլորտները համակած համապարփակ ճգնաժամն էր ու երկրի պետական գանձարանի սնանկությունը: Նույնպիսի վիճակում էին նաև երկրի արժույթային ռեզերվները: 1993 թ. նոյեմբերի 22-ին ՀՀ ազգային դրամը շրջանառության մեջ դնելու պահին Կենտրոնական բանկում ընդամենը 500 հազար դոլարի պաշարներ կային: Բնականաբար, տնտեսական ու ֆինանսական ճգնաժամի պայմաններում ազգային դրամի շրջանառության մեջ դնելը ուղեկցվեց դրա արագընթաց արժեզրկմամբ: Ահավասիկ, ազգային դրամի ներդրման պահին ամերիկյան 1 դոլարը հավասարվեց 14.65 դրամի: Այդ փոխարժեքը, սակայն, մեկ տարվա ընթացքում արժեզրկվեց ավելի քան 28 անգամ. արդեն մեկ տարի անց՝ 1994 թ. նոյեմբերին, ամերիկյան 1 դոլարը հայաստանյան բանկերը գնում և վաճառում էին 404 դրամով²:

Բնականաբար, այս պայմաններում ՀՀ իշխանությունները, ուզած-չուզած, դիմեցին միջազգային ֆինանսական դոնոր կազմակերպություններին, առաջին հերթին Արժույթի միջազգային հիմնադրամին և Համաշխարհային բանկին՝ երկարաժամկետ արտոնյալ վարկեր տրամադրելու և ՀՀ-ում սկսված բարեփոխումներին օժանդակելու խնդրանքով: Միջազգային այս ֆինանսական կառույցները, իհարկե, գումարներ (պարտք) տվեցին,

1 Տես ՀՀ Սահմանադրություն. 1995թ. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=1>

2 Տես Դրամ և դոլար. փոխարժեքի վարքագիծը 1993-2016 թթ.

<https://www.civilnet.am/news/2016/03/30/dram-dollar-exchange-rate-history/289509>

սակայն հետագա ընթացքը ցույց տվեց, որ այդ պարտքերը շատ ավելի թանկ նստեցին պատերազմից ու երկրաշարժից քայքայված նորանկախ հանրապետության վրա: Ծայրահեղ ազատական բարեփոխումների այն տարբերակը, որը գործի դրվեց Հայաստանում 1993-ից ի վեր, ենթադրում էր պետական սեփականության կարգավիճակ ունեցող արտադրական ձեռնարկությունների, էներգետիկ օբյեկտների, ենթակառուցվածքների և այլ օբյեկտների հնարավորինս արագ օտարում մասնավոր անձանց ու կազմակերպություններին:

Այսպիսով Հայաստանում ընտրվեց արդիականացման ու ինստիտուցիոնալ փոխակերպման ծայրահեղ նորազատական (սեռլիբերալ) մոդելը, ինչը զուգակցվեց դատաիրավական և քաղաքական համակարգերի նույնքան ձևախախտված բարեփոխումներով: Ամբողջ խնդիրն այն էր, որ տնտեսաքաղաքական բարեփոխումների հիմքում ժամանակավրեպ գաղափարախոսություն էր դրվել: Ազատականության և ազատ շուկայի արդունավետ կարգավորման միջոցով, որ քարոզվում էր դեռևս 17-րդ դարից, ըստ էության հաջողությամբ որդեգրվել էր հենց միջազգային ֆինանսական կառույցների կողմից: Ուլտրալիբերալ ու ազատական բարեփոխումների այդ տարբերակները միջազգային ֆինանսական կառույցներին ու նրանց թիկուքին կանգնած փոքրաթիվ զարգացած երկրներին թույլ էին տալիս, արժեզրկելով մեր նյութա-արտադրական և արդունաբերական ակտիվները, դրանք վերածել ավելի ցածրարժեք ռեսուրսների, հնարավորություն տալով չեզոքացնելու այն հնարավոր սպառնալիքները, որ կարող էին ստեղծվել հենց իրենց համար: Այսպես կոչված «շոկային թերապիայի» տարբերակով բարեփոխումները, որ ուղեկցվում էին գների արագ ազատականացման, պետական ունեցվածքի համատարած ու հախուռն, առանց ներդրումային ծրագրերի ու աշխատատեղերի պահպանման երաշխիքների մասնավորեցման զանգվածային գործարքներով, բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում քառսի ու տնտեսական փլուզման նախադրյալներ ստեղծեցին:

Հաճախ կարծիքներ են հնչում, թե 1990-ական թվականների բարեփոխումները հատկապես մասնավորեցման ու տնտեսության փոխակերպման բնագավառում իրենց բնույթով ազատական բարեփոխումներ էին: Պարզապես դրանց անարդյունավետությունը պայմանավորված էր լայնորեն տարածված կոռուպցիայով և խմբիշխանական կամ կլանային դրսևորումներով: Մինչդեռ իրականությունն այլ է: Կոպուլացիան առաջին հերթին ոչ թե ազատական (իմա՝ արդար) բարեփոխումների, հատկապես պետական ունեցվածքի մասնավորեցման մեխանիզմների ուղղակի հետևանքն էր, այլ ճիշտ հակառակը՝ կոռուպցիան հետևանք էր լայնորեն կիրառված բյուրոկրատական մասնավորեցման մեխանիզմների գործադրման:

Հաճախ կարծիք է հնչում, թե անցկացված հախտուն բարեփոխումները ունեին ազատական բովանդակություն, որ իբր՝ դրանք իրենց բնույթով շուկայական բարեփոխումներ էին: Սակայն իրականությունն այլ էր. **բարեփոխումները բյուրոկրատական բովանդակություն ունեին, որոնց նպատակը պետական սեփականության շահադիտական վերաբաշխում-վերաբաժանումն էր հենց իր՝ պետական բյուրոկրատիայի ու նրան ածանցված ընկեր-բարեկամների օգտին:** Այնինչ, եթե բարեփոխումները իրականացվեին շուկայական արդարության սկզբունքներով, ապա դրանց գլխավոր չափանիշը պետք է դառնար արդյունավետությունը, այսինքն՝ պետական սեփականությունը բաժին կհասներ արդյունավետ ներդրումների ունակ սեփականատերերին, ովքեր շահագրգռված կլինեին դրա զարգացման մեջ առաջին հերթին հնացած տեխնոլոգիաներն արդիականացնելու և ազգային տնտեսության մրցունակության մակարդակը բարձրացնելու նպատակով: Այդ պատճառով որքան Հայաստանում ծավալվում էին մասնավորեցման գործընթացները, այնքան ավելի մեծ ծավալներ ու ընդգրկում էր ստանում կոռուպցիան՝ վերածվելով հանրային-տնտեսական կյանքի համընդգրկուն բացասական որակի³:

2. Արդիականացման մարտահրավերը և կառավարման համակարգի կոլապսը

Կարելի է պնդել, որ 1990-ական թվականներից ի վեր հայաստանյան բյուրոկրատական բարեփոխումները և իշխանական բարձրագույն դեմքերի կողմից յուրայինների օգտին պետական ունեցվածքի քրեական համատեքստով վերաբաշխումը ուղեկցվում էին յուրօրինակ նոր քաղաքական մշակույթի ու համապատասխանաբար՝ կառավարման համակարգի ձևավորմամբ: Ուստի նախկին ԽՍՀՄ գերկենտրոնացված ու վարչական քաղաքական համակարգից անցումը ժողովրդավարական ընտրության միջոցով իշխանության վերարտադրության գործակարգերին, որոնք, ըստ ՀՀ Սահմանադրության, պետք է ապահովեին իշխանությունների օրինակարգությունն ու հաշվետվողականությունը, իրականում ձևավորեց նոր՝ նախկինում անծանոթ, **քաղաքական կոռուպցիայի պարադիգմը**, ինչը իրենով հանգեցրեց երկրի տնտեսական ու ֆինանսական միջոցների մի զգալի մասի ապօրինի յուրացմանը տիրապետող իշխանախմբերի կողմից: Բաշխման ու վերաբաշխման նման գործակարգերի անխափան գործողությունը ենթադրում էր քաղաքական ընտրության ինստիտուտների այ-

3 Տե՛ս **Մարգարյան Ա. Ե.** ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. համակարգային հիվանդության ախտաճանաչումները: «Վեն» հանդես, 2010, N 2(30), Հավելված, էջ IV:

լասերում և ապաստանականացում, իսկ ամբողջության մեջ՝ կառավարման համընդգրկուն կոռուպցիոն մոդելի արմատավորում:

Հայաստանի Հանրապետությունում 1990-ական թվականներին սկիզբ առած հակաժողովրդավարական քաղաքական գործընթացները, ինչպես նաև բռնի մեթոդներով իշխանության վերարատադրության ու փոխանցման մեխանիզմները հանդիսացան այն պարարտ հողը, որոնք տասնամյակներ առաջ կանխորոշեցին երկրի արդիականացման գործընթացների արգելափակումը և լճացման միտումների խորացումը: Յուրաքանչյուր 4-5 տարին մեկ անցկացվող և բռնություններով ու զագվածային ընտրակեղծիքներով ուղեկցվող քաղաքական ընտրությունները ավելի ու ավելի էին մոտեցնում երկրի ժողովրդավարական հնարավորությունների մայրամուտը և դուռ բացում քրեաօլիգարխիայի ձևավորման համար:

1990-ական թվականների վերջից մեզանում տեղի ունեցավ երկրի տնտեսության և քաղաքական համակարգի խմբիշխանական այլասերումը: Այլևս ակնհայտ դարձավ, որ պետական խոշոր օբյեկտների մասնավորեցմանը (սեփականաշնորհմանը) զուգընթաց տեղի է ունեցել խոշոր բիզնեսի և պետական իշխանության սերտաձումը: Սեփականություն և բիզնես ձեռք բերելու, այն որպես հարստություն կուտակելու և բազմապատկելու երաշխիքը այլևս դարձավ օրենսդիր և գործադիր իշխանության բարձր պաշտոններ զբաղեցնելը: Ու որքան էլ զավեշտալի հնչի, այդպիսի արտոնյալ կարգավիճակ էր ապահովվում նաև ուժային ու դատական համակարգերի, ինչպես նաև զինված ուժերի բարձրաստիճան պաշտոնների համար: Այդպիսով՝ **կոռուպցիայի ու կառավարման համակարգի այլասերման գործընթացները դարձան համընդգրկուն ու պետության հիմքերը թուլացնող-քանդող բացասական ազդակներ:**

Մեծ հաշվով, եթե երկարաժամկետ հատվածով գնահատելու լինենք Հայաստանի պետական կառավարման համակարգի ընդհանուր համապատկերն ու բովանդակությունը, ապա կարելի է պնդել, որ երկրի բոլոր ղեկավարների օրոք տեղի է ունեցել պետության ու պետական կառավարման նկատմամբ վստահության շարունակական անկում ու կազմալուծում: Հատկապես 2000-ական թվականներին երկրի մակրոտնտեսական ցուցանիշների հարաբերական բարելավման ու բնակչության ընդհանուր կենսամակարդակի աճի համապատկերին տեղի է ունեցել ըստ ունեցվածքի ու ըստ եկամուտների երկրի բնակչության բևեռացման աստիճանի բարձրացում: Այս դեպքում արձանագրումը հետևյալն է. հարուստները ավելի արագ տեմպերով են շարունակել կուտակել հարստություն ու ավելացնել եկամուտները, իսկ աղքատները չեն կարողացել նույն տեմպերով բարելավել իրենց վիճակը ու բարձրացնել իրենց կյանքի որակը:

Համակարգային կոռուպցիան մեզանում տասնամյակներ շարունակ հանդիսացել է կառավարման ու բյուրոկրատական բուրգը կառավարելիության տիրույթում պահելու գլխավոր քաղաքական մշակույթը: Տակավին 2009 թ. «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն» վերլուծական-հետազոտական կառույցի կողմից կատարված սոցիոլոգիական հարցումներն ու հետազոտությունները ցույց էին տալիս, որ բնակչության ընկալման մեջ կոռուպցիան համարվում է լրջագույն խնդիր: Ըստ այդ հետազոտության՝ բնակչության 65 տոկոսը կոռուպցիան լուրջ խնդիր է համարել դատական համակարգի համար, 56 տոկոսը՝ ընտրական համակարգի համար, 58 տոկոսը՝ նախարարությունների համար⁴: ՄԱԿ-ի փորձագետների վերլուծական գնահատումների համաձայն՝ զարգացող երկրները կոռուպցիայի հետևանքով տարեկան 20-ից մինչև 40 միլիարդ դոլարի եկամուտներ են կորցնում: Ընդ որում, յուրաքանչյուր երկրի պարագայում այն կարող է կազմել երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մոտ 15 տոկոսը⁵: Հայաստանյան ՀՆԱ չափանիշներով կոռուպցիոն կորուստները առեղծված են կազմում: Ասենք, եթե առաջնորդվելու լինենք վերջին մեկ ու կես տասնամյակի ցուցանիշներով, ապա տարեկան միջին հաշվով մեր երկիրը կոռուպցիայի պատճառով կորցրել է շուրջ մեկ միլիարդ դոլար:

3. Արդիականացումը և ռազմական ծախսերի բեռը

Այն, որ Արցախյան առաջին պատերազմի արդյունքում 1994 թ. կնքված գինադադարից հետո թե՛ Հայաստանը և թե՛ Ադրբեջանը շարունակել են ավելացնել ռազմական ծախսերը, ակնհայտ է: Սակայն մինչև 2000-ական թվականները հակամարտող կողմերը իրենց ծախսերը գրեթե հավասար չափով են ավելացրել: Ըստ Ստոկհոլմի Խաղաղության հետազոտության միջազգային ինստիտուտի տվյալների՝ Հայաստանը և Ադրբեջանը 1995-1999 թթ. ժամանակահատվածում ռազմական նպատակներով ծախսել են մոտ 500 միլիոն դոլար⁶: **Սակայն 2000-2018 թթ. ժամանակահատվածում Ադրբեջանը կտրուկ ավելացրել է ռազմական ծախսերը՝ ավելի քան երկու տասնամյակի ընթացքում ռազմական նպատակներով ծախսելով ավելի քան 26,5 միլիարդ դոլար, իսկ Հայաստանը այդ ժամանակահատվածում ծախսել է չորս անգամ պակաս գումար՝ ընդամենը 6,5**

4 Տե՛ս Կոռուպցիան Հայաստանում. տնային տնտեսությունների և ձեռնարկությունների 2009 թ. հետազոտություն. էջ 15.

https://www.crrc.am/wp-content/uploads/2019/03/2009_Corruption_Survey_Report_Armenian.pdf

5 Տե՛ս ՄԱԿ-ի Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության 13-րդ կոնգրես: Կոռուպցիա: Ղոհա, 13-15 ապրիլի 2015 թ. https://www.un.am/up/file/Crime%20Congress_Corruption_Arm_Final.pdf

6 Տե՛ս աղբյուրը՝ <https://www.sipri.org/databases/milex>

միլիարդ դոլար⁷: Բնականաբար, հարց է ծագում. ինչու՞ Ադրբեջանը կարողացավ իր բանակը զինել ու արդիականացնել ժամանակակից ամենարդիական զենքերով, ինչպես նաև մեծածավալ միջոցներ ծախսել ՆԱՏՕ-ի ստանդարտներով իր բանակի սպայակազմի ուսուցման ու մարտական պատրաստության բարձրացման ծրագրերի վրա, իսկ Հայաստանը դա չարեց: Մինչդեռ երկու թշնամի երկրների միջև ռազմական ծախսերի մեջ խզումը այնքա՛ն տեսանելի էր Հայաստանի Հանրապետության մեկը մյուսին հաջորդած ղեկավարներին ու վերնախավերին:

Երկու երկրների ռազմական ծախսերի վիճակագրությունը ցույց է տալիս, որ Ադրբեջանը իր ռազմական ծախսերը ավելացրել է հատկապես 2006 թվականից, երբ արևմտյան խոշոր նավթագազային կորպորացիաների բազմամիլիարդ ներդրումների շնորհիվ ոչ միայն ավարտին հասցրեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը, այլև սկսեց մեծածավալ նավթ վաճառել արևմտյան տնտեսություններին: Իսկ ի՞նչ ռեսուրսներ ունեն Հայաստանը: Ճիշտ է, Հայաստանը նավթ ու գազ չունեն, սակայն առկա էին գունավոր մետաղների (ոսկի, պղինձ, մոլիբդեն և այլ բազմամետաղներ) հսկայական պաշարներ, որոնք, սակայն շահագործվում էին գլխավորապես օֆշորային գրանցում ունեցող մասնավոր ընկերությունների կողմից: Այս պարագայում պետությունը այդ ընկերությունների ստացած բազմամիլիարդ եկամուտների համեմատ չնչին եկամուտներ էր ստանում՝ պետական բյուջե մուծվող հարկերի տեսքով, որոնք, բնականաբար, բավարար չէին ռազմական հավասարակշռությունը պահպանելու համար: Թվում էր, թե իրավիճակը կարող է կտրուկ փոխվել 2018 թ. մայիսին Հայաստանում տեղի ունեցած քաղաքական փոփոխություններից հետո, քանի որ նոր իշխանությունը բարձրագույն խոստումներ էր տալիս, թե կբացահայտի Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում առկա ստվերային ու օֆշորային շրջանառություններն ու եկամուտները մուտք կանի պետական գանձարան: Սակայն, որքան էլ տարօրինակ է, նման բան տեղի չունեցավ:

Այնինչ, միջազգային փորձը հաստատում է, որ ռազմական չլուծված հակամարտություններն ու պատերազմի սպառնալիքները շատ ու շատ երկրների ստիպում են ոչ միայն համարժեքորեն ավելացնել ռազմական ծախսերը, այլև գիտական ու տեխնոլոգիական զարգացման պատշաճ ներուժի առկայության պարագայում, այդ ռեսուրսները ի սպաս դնել արդիական ու մրցունակ զենքերի ու պաշտպանական համակարգերի ստեղծման ներդրումային նախագծերի մեջ: Որպես կանոն, նման իրավիճակում գտնվող երկրները ժամանակի ընթացքում կարո-

7 Տես նույն տեղում:

ղանում են ստեղծել ու զարգացնել տպավորիչ ռազմաարդունաբերական համալիրներ: Այդ տեսանկյունից խիստ տիպական է Իսրայելի օրինակը: Այս երկիրը կարողացել է հարևան արաբական երկրների հետ տևական հակամարտության ու թշնամանքի պայմաններում՝ բառացիորեն երկու տասնամյակի ընթացում, ստեղծել միջազգային չափանիշներով մրցունակ ռազմաարդունաբերական համալիր, արտադրել Ժամանակակից սպառազինություններ ու պաշտպանական համակարգեր և ըստ էության այդ բնագավառը դարձնել տնտեսական զարգացման հզոր հենահարթակ: Ըստ Մտոկհոլմի Խաղաղության ուսումնասիրության ինստիտուտի տվյալների՝ 2015–2019 թթ. Իսրայելը իր ռազմական արտադրանքի արտահանումների ծավալները ավելացրել է 77 տոկոսով, իսկ 2019 թ. վաճառել է շուրջ 10 միլիարդ դոլարի զենք, հարձակողական համալիրներ և ռազմական այլ տեխնոլոգիաներ ու սպառազինություններ⁸:

Ոչ միայն Իսրայելի, այլև մի շարք այլ պետությունների, մասնավորապես, նախկին ԽՍՀՄ-ի, Եվրոպական առաջատար երկրների, Պակիստանի, Հյուսիսային Կորեայի օրինակը ցույց է տալիս, որ տևական կոշտ դիմակայությունը հարևանների հետ ու պատերազմի սպառնալիքները հարկադրում են մեծածավալ ռեսուրսներ կուտակելով, ստեղծել կամ ձեռք բերել զենքեր ու սպառազինություններ, որոնք բավարար են ռազմական ոլորտում հավասարակշռությունն ապահովելու ու զինված ագրեսիա թույլ չտալու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է բոլոր մարտահրավերների և սպառնալիքների չեզոքացմանը: Այս տեսակետից լրջագույն մարտահրավեր էր նաև համաշխարհային համավարակը, որը 2020 թ. գարնանը սկսվելով՝ դարձավ լրջագույն սպառնալիք համաշխարհային ու ազգային տնտեսությունների կայունությանը ու միաժամանակ՝ տնտեսական և գոյապահպանական անվտանգությանը:

1. Նոր տիպի թագավարակը և գլոբալ աշխարհի իրողությունները

Այլևս ակնհայտ է, որ ի դեմս նոր տիպի Արևելյան սուր շնչառական հիվանդության՝ SARS-Cov-2-ի, կամ ինչպես ընդունված է ասել՝ նոր տիպի թագավարկի, մարդկությունը բախվել է դարակազմիկ ազդեցության մի իրողության, որը, թվում է, իր բնույթով լինելով զուտ առողջապահական խնդիր, այդուհանդերձ, ընթացիկ ընդգրկումով, առաջացրած վայրիվերումներով ու հեռահար հետևանքներով պարադիզմալ կամ շրջադարձային նշանակություն ունի: Թերևս իրավացի են բոլոր այն վերլուծաբաննե-

8 Տե՛ս https://www.sipri.org/sites/default/files/2020-03/arms_transfers_pr_2020_rus.pdf:

րը, ովքեր համավարակի այսպիսի զարգացման թրենդին նոր աշխարհակարգի ձևավորման կամ գոնե՝ համաշխարհային ուժի կենտրոնների նոր դարաբաշխման գործառույթներ են վերագրում: Կա՞ արդյոք, օրինաչափություն իր մասշտաբներով աննախադեպ այս գլոբալ չարիքի էքսպոնենցիալ բռնկման ու տարածման մեջ, արդյոք այն հարուցված է ինչ-ինչ խմբերի կամ ուժի կենտրոնների կողմից, ասել է թե՛ սուբյեկտային ծագումնաբանություն ունի՝ հեռահար նպատակադրումներով հանդերձ, թե՞ սա զուտ պատահականության, այսպես ասած՝ բնության ուժերի ազատ խաղի, կենդանական աշխարհից բացիլների արտագատման-համադրման ու մարդկային օրգանիզմում դժվար հարմարեցման էվոլյուցիոն գործընթացների արդյունք է:

Առաջին հայացքից թվում էր, թե նոր տիպի թագավարակը սովորական սեզոնային գրիպ է, որի նմանը վերջին տասնամյակի ընթացքում առնվազն երկու անգամ ի հայտ էր եկել, ինչը, սակայն, անցել է՝ չունենալով լուրջ ազդեցություն երկրների ու ժողովուրդների տնտեսությունների և սոցիալական իրավիճակի վրա: Թագավարակի բռնկումներ եղել էին, ասենք, 2003 և 2009 թվականներին, որոնք հայտնի էին թոչնագրիպ և խոզի գրիպ անվանումներով, որոնց ազդեցությունները սկզբունքորեն համադրելի էին սովորական սեզոնային հարբուխների թողած հետևանքներին: Սակայն կորոնավարակների նախորդ բռնկումներն ըստ էության վերագրվել էին բացիլների, այսպես ասած՝ մարդու արհեստական միջամտությունից զերծ բնական էվոլյուցիոն երևույթների ինքնաբերական համադրմանը և սովորական սպառողի տեսանկյունից հարցեր չէին առաջացել:

Մինչդեռ ներկա իրավիճակը բոլորովին այլ է: Բառացիորեն մի քանի ամսվա ընթացքում նոր տիպի թագավարակը բոլոր ուղղություններով ու ոչ մի սահման չճանաչելով՝ այնպիսի մեծ արագությամբ տարածվեց աշխարհով մեկ, որ բոլորի համար դարձավ հիմնախնդիր: Համացանցի, հեռահաղորդակցության ու ցանցային տեխնոլոգիաների պայմաններում, երբ լուրերը կայծակնային արագությամբ հասանելի են դառնում աշխարհի ցանկացած կետում, շատ ավելի հեշտ ու դյուրին է ստեղծել տագնապի, վախի ու անպաշտպանության զգացումներ և, վարպետորեն խաղալով, կառավարել մարդկանց, նաև՝ պետությունների ու կառավարությունների վարքագիծը:

Կարելի է նկատել, որ թագավարակի հետ կապված զարգացումները տարբեր ընթացքներ ունեցան աշխարհի տարբեր երկրներում: Այն երկրներում, որտեղ իշխանությունները հենց սկզբից շատ խիստ, որոշներն էլ՝ խստագույն սահմանափակումներ մտցրին, նրանցում հիմնականում վարակը մեծ տարածում չստացավ: Ընդ որում, դրանք վերաբերում էին ինչ-

պես մարդկանց տեղաշարժերի առավելագույն սահմանափակմանը և կարանտինային ռեժիմին, այնպես էլ տնտեսական գործունեության գրեթե ամբողջական սահմանափակմանը: Դա հատկապես վերաբերում է Չինաստանին, որը, ըստ էության, առաջինը բախվեց թագավարակի ալիքներին ու շատ լավ հասկանալով, թե ինչ հզոր ավերածություններ կարող է այն հարուցել, կիրառեց խստագույն սահմանափակումներ: Ընդ որում, Չինաստանը կարանտինային մուտքը և ելքը բոլորից շուտ իրականացրեց ու կարողացավ իրավիճակը սկզբից մինչև վերջ վերահսկողության տակ պահել: Սրա հակառակ իրավիճակը երկրագնդի մյուս կիսագնդում էր՝ հատկապես ԱՄՆ-ում: Այդ երկրի իշխանությունները բավականին ուշացած արձագանքեցին թագավարակի բռնկմանը: Այդ ժամանակ ԱՄՆ-ում ընթանում էր նախագահական ընտրապայքար և իշխանությունները զբաղված էին ընտրարշավով: Այդուհանդերձ շրջադարձային կետի մոտակայքում այդ երկրում մտցվեցին սահմանափակումներ, արգելվեցին մուտքն ու ելքը, կիրառվեցին կարանտինային սահմանափակումներ: Դեպքերի ընթացքը ցույց տվեց, որ աշխարհի թիվ մեկ տերությունը խիստ խոցելի է թագավարակի հարվածների նկատմամբ:

«Թագավարակ» կոչվող պատմության մեջ նաև ի՞նչն է հետաքրքիր: Կան պետություններ, որոնց իշխանությունները, ըստ էության, ոչ մի ուշադրություն չեն դարձրել վարակի վրա և շարունակել են ապրել՝ չնկատելով այն: Խոսքը հատկապես երկու՝ տրամագծորեն տարբերվող երկրների՝ սկանդինավյան Շվեդիայի և նախկին ԽՍՀՄ ամենաէպատաժային առաջնորդն ունեցող Բելառուսի մասին է: Ի սկզբանե այս երկրների իշխանություններն անտեսեցին ԱՀԿ-ի որոշումներն ու հանձնարարականները, ասես ոչինչ էլ չէր եղել, ու շարունակեցին իրերի վիճակը թողնել նույնը: Եվ ըստ էության այդ երկրներում գրանցված թագավարակի վիճակագրությունը իր ցուցանիշներով շարունակում է շատ ավելի ցածր թվեր արձանագրել, քան բազմաթիվ այնպիսի երկրներինը, որոնք սկսեցին գործադրել խստագույն սահմանափակումներ, սակայն թվերը մնացին աճողական թրենդի մեջ: 2020 թ. հունիսի 10-ի դրությամբ Շվեդիայում թագավարակով հիվանդացածների թվաքանակը կազմել է 48 100 մարդ, իսկ մահացածներինը՝ 4795, Բելառուսում՝ հիվանդացածների թիվը՝ 51066, մահացածներինը՝ 288⁹: Իսկ եվրոպական այնպիսի երկրներ, ինչպիսիք են, ասենք, Իտալիան, Իսպանիան կամ Ֆրանսիան, որոնք համեմատաբար շուտ կիրառեցին բավականին կոշտ սահմանափակումներ, այդուհանդերձ, նրանցում թե՛ հիվանդացության և թե՛ մահացության ցուցանիշները մի քանի անգամ ավելի բարձր էին:

9 Տե՛ս <https://www.worldometers.info/coronavirus/>:

Ինչու՞մն է խնդիրը: Իհարկե, կարելի է նշված երկրներում ու մյուս պետություններում թագավարակի տարածման անհամեմատ մեծ տարբերությունները բացատրել ժողովուրդների ինքնակազմակերպման տարբեր մակարդակներով, մշակութային տարբեր գործոններով ու զարգացման առանձնահատկություններով, սակայն ըստ երևույթին կան նաև այլ գործոններ, որոնք առաջին հայացքից չեն երևում, բայց էական դեր խաղացող հանգամանքներ են: Օրինակ բերենք թեկուզ թագավարակով հիվանդացության և մահվան դեպքերի ու հանգամանքների հաշվառման մեթոդաբանությունը: Երկրներ կան, որտեղ հիվանդացության վիճակը գնահատում են՝ թագավարակը պահելով երկրորդ պլանում, այսինքն՝ եթե մարդը ունի որևէ այլ հիվանդություն, բայց կորոնավիրուսի առկայություն է գրանցվել, սակայն դրանից չի մահացել, նա չի համարվում կորոնավիրուսով հիվանդ: Իսկ եթե վարակակիր մարդը մահանում է, դա գրանցվում է այն քրոնիկ հիվանդության հաշվեկշռին, որն ունեցել է ի սկզբանե: Ըստ երևույթին սկզբում հենց այսպիսի մեթոդաբանություն էին կիրառում, օրինակ, մեր հարևան Վրաստանի իշխանությունները, որտեղ թագավարակի վիճակագրությունը տարօրինակորեն շատ ցածր էր գրանցում: Ահավասիկ, 2020 թ. հունիսի 10-ի դրությամբ այդ երկրում գրանցված է եղել ընդամենը 833 վարակակիր, իսկ մահվան դեպքերի թիվը կազմել է 33: Հայաստանում այդ նույն օրվա դրությամբ թվերը գրեթե մեկ կարգով բարձր էին՝ 14 644 վարակակիր, և 227 մահացած¹⁰: Մինչդեռ արդեն 2021 թ. հունվարի 18-ի դրությամբ Հայաստանում վարակվածների թիվը կազմել է 164 586 մարդ, թագավարակից մահացածներինը՝ 2992, իսկ Վրաստանում վարակակիր անձանց թիվը կազմել է 247 809, իսկ մահացածներինը՝ 2933¹¹: Ընդհանուր առմամբ աշխարհում թագավարակով հիվանդացած անձանց թիվը անցնում է 95 միլիոնից, իսկ մահացածների քանակը ավելին է, քան 2 միլիոնը¹²:

Չի բացառվում, որ թագավարակի վերոնշյալ վիճակագրությունը նաև պայմանավորված է իշխանությունների մոտեցումներով և ԱՀԿ կոչվող կազմակերպության վարքագծի ու քաղաքականության նկատմամբ սկզբունքորեն տարբեր վերաբերմունքով: Սրան պետք է հավելել թագավարակի հետ կապված քաղաքական, մանիպուլյատիվ ու ինստիտուցիոնալ գործոնների ու շահադրդումների տարբեր համակցությունները, որոնք հանրագումարում թագավարակի վիճակագրական քարտեզը դարձրել են խիստ խայտաբղետ, բազմերանգ ու պարադոքսներով լի ամբողջություն: Սա խոսում է մի բանի մասին. նոր տիպի թագավարակը իր բնույթով, ծագումնաբանությամբ, ընթացքով ու ազդեցություններով ոչ միայն զուտ առողջապահական և հուման-

10 Տե՛ս <https://www.worldometers.info/coronavirus/>:

11 Տե՛ս նույն տեղում

12 Տե՛ս նույն տեղում

իտար խնդիր է, այլև մեծ քաղաքականություն է, որի տակ մեծ տնտեսական-բիզնես շահեր ու հսկայական ֆինանսներ են դրված: Բացի դա, թագավարակի միջոցով նաև գլոբալ մասշտաբով ազդեցության և ուժի ցուցադրության ու իրացման հստակ թրենդներ ու վեկտորների փորձարկումներ են իրականացվում:

2. Թագավարակը և տեխնոլոգիական փոփոխությունները

Ամենևին գաղտնիք չէ, որ կենսաբանական ճարտարագիտության նորագույն մշակումները վերջին տասնամյակների ընթացքում դարձել են զարգացած երկրներում գիտատեխնոլոգիական, տնտեսական ուժի առկայության և դրա ցուցադրության ուղենիշերի փորձաքարերը: Դրան գումարվում են համաշխարհային խոշորագույն դեղագործական ընկերությունների բիզնես շահերն ու շահադրդումները, որոնք ևս, իրենց երկրների կառավարությունների հետ ձեռքձեռքի տված, ֆինանսավորում են այսօրինակ հետազոտությունները և մշակումները: Հաճախ խիստ փակ և անվտանգության ու գաղտնիության չափազանց բարձր մակարդակ ունեցող լաբորատորիաներում, գիտական կենտրոններում իրականացվող այդօրինակ հետազոտությունների ու մշակումների արդյունքների պատվիրատուները ռազմական գերատեսչություններն են, իսկ ֆինանսավորումն իրականացվում է պետական խողովակներով: Սակայն խնդիրն էլ այն է, որ նման ձեռնարկների վրա վաղուց իրենց ձեռքն են դրել համաշխարհային քաղաքական և տնտեսական հարթակներում իրենց կայուն դերակատարություններն ունեցող հայտնի մեծահարուստ ընտանիքներին ու կլաններին պատկանող Ռոքֆելլերների, Բիլ և Մելինդա Գեյթսի և այլոց հիմնադրամները: Իսկ սա մեծ քաղաքականություն է, որն արդեն սրում ու լրջացնում է իրավիճակը:

Ի՞նչ նպատակներ են հետապնդում համաշխարհային հարստության մի ահռելի մասի սեփականատեր ընտանեկան կլանները՝ տնօրինելով հարստության, փողի, բիզնեսի տարբեր ակտիվների ահռելի զանգված: Նրանց հայտարարությունները, գործողությունները, փակ հանդիպումները և քննարկումներն արդյոք իրենց մեջ դավադրություններ չեն պարունակում՝ ուղղված տարբեր ազգերի ու ժողովուրդների դեմ: Ի վերջո, զարգացած երկրներից մի քանիսի՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի և այլն, քաղաքականությունների մեջ այդ մեծահարուստ ընտանիքների բիզնես շահերն ուղղակի ներկառուցված են: Իսկ սա արդեն գլոբալ քաղաքականություն է՝ հաշվի առնելով համաշխարհային ասպարեզում առկա մյուս ուժային կենտրոններն ու նրանց հավակնությունները (Չինաստան, Ռուսաստան, ասիական և արաբական երկրների ընտրանի և այլն):

Կարելի է անդել, որ զարգացած երկրների մեծահարուստ ընտրախավերի մոտ միշտ էլ եղել է գայթակղություն՝ սահմանափակել ու կրճատել զարգացող երկրների աղքատ բնակչության թվաքանակը թույլատրելի կամ անթույլատրելի միջոցներով: Այս հողի վրա էլ սահմանափակ ռեսուրսների համար պայքարը մշտապես բորբոքել է երկրների ու ժողովուրդների միջև հակասությունները, իսկ հաճախ հանգեցրել է ինչպես տեղային բախումների ու հակամարտությունների, այնպես էլ ավերիչ ու արյունահեղ պատերազմների: 20-րդ դարի երկու համաշխարհային պատերազմները, ռազմական բախումները մի քանի հարյուր միլիոն մարդկանց կյանքեր են խլել և «պատերազմի մշակույթը», ինչպես երևում է, փոխանցվել է 21-րդ դար:

Բնականաբար, պատերազմելու կամ պաշտպանվելու համար զենքեր են հարկավոր: Այս տեսակետից թերևս կարելի է համաձայնել էվոլյուցիոն կենսաբանության և սոցիոլոգիայի տեսաբան **Ջարեդ Դայմոնդի** այն անդաման հետ, որ մարդկային հասարակության պատմությունը «զենքերի, բացիների և պողպատի պատմություն է»: Ջ. Դայմոնդը պնդում է, որ մարդկային հասարակության տևական էվոլյուցիայի ընթացքում առավել կենսունակ են գտնվել ու գոյատևել այն ազգերն ու ժողովուրդները, որոնք, ամուր մետաղների ու մարտունակ զենքերի ստեղծմանը և օգտագործմանը զուգահեռ, հարմարվելով վայրի կենդանիներին բնորոշ բացիներին, կարողացել են «ընտելացնել» դրանց ու այդպիսով լուծել սննդի, հագուստի և այլ կարիքների բավարարման խնդիրները¹³: Այդպիսով մարդը, ընտելացնելով վայրի կենդանիներին, առաջին հերթին լուծել է իր սննդի հարցը, դարձել է նստակյաց, որից հետո արդեն խնդիր է ունեցել ստեղծել հարձակողական զենքեր՝ հարևան համայնքների, տարածքների, պետությունների ռեսուրսները ձեռքբերելու, բռնազավթելու կամ ընդհակառակը՝ նրանց զավթողական նկրտումներից պաշտպանվելու նպատակներով: Իսկ դրա համար անհրաժեշտ է եղել ունենալ մետաղ ու տեխնոլոգիաներ:

Մարդկային հասարակության ձևավորման ու զարգացման վաղնջական ժամանակներից ի վեր մարդու հարձակողական կամ զավթողական էությունից շատ քիչ բան է փոխվել: Ավելի շուտ՝ փոխվել-կատարելագործվել են հարձակողական զենքերը, և ավելի սարսափելի է դարձել նրանց ավերիչ ուժը: Այս իմաստով արդեն անցյալ դարի 70-80 ական թվականներին հարձակողական զենքերի կործանարար ուժն այն աստիճանի էր հասել, որ դրանք, որքան էլ պարադոքսալ հնչի, այլևս «պիտանի չէին» ավանդական ձևով զավթել-տիրապետելու և այլոց ռեսուրսները

13 См. и Даймонд Д. Ружья, микробы и сталь: Судьбы человеческих обществ. М.: АСТ, Corpus, 2010, с. 18-19.

յուրացնելու համար: Խոսքը, իհարկե, հարձակողական միջուկային զենքերի մասին է: Արդեն այդ ժամանակաշրջանում այնքան մահաբեր պաշարներ էին կուտակվել աշխարհում, որ նրանցով հնարավոր էր մի քանի հարյուր անգամ ոչնչացնել մեր մոլորակը: Բնականաբար, այս իրավիճակում աշխարհի հզոր պետությունները և նրանցում քաղաքականություն որոշող թելադրող ընտրախավերը սկսեցին մտածել ավելի նրբահնար «զենքերի» մասին: Ուստի այս համատեքստում աշխարհի բնակչության թվաքանակի աճի զսպման ու կտրուկ սահմանափակման ծրագրերն ի հայտ եկան 1970-ական թվականներին՝ այսպես կոչված «սառը պատերազմի» ամենաթեժ ժամանակահատվածում: Իհարկե, այս հարցում առաջատար տերությունը ԱՄՆ-ն էր:

Դեռևս անգլիացի քահանա ու փիլիսոփայության պրոֆեսոր **Թոմաս Մալթուսն** էր նման գաղափարներ քարոզում՝ մի շատ կասկածահարույց թեզով. քանի որ, բնակչության թվաքանակն ավելանում է երկրաչափական պրոգրեսիայով, իսկ կենսամիջոցների քանակը՝ թվաքանական պրոգրեսիայով, այդ բալանսը մշտապես խախտվում է: Ուստի համապատասխանությունը պետք է «ձգբրտվի», ինչը կամ պետք է անի մարդը իր բարոյական զսպման միջոցով, կամ էլ դա կանի բնությունը՝ համաճարակների, տարերային աղետների և այլ անոմալ երևույթների միջոցով¹⁴:

Կարելի է ասել, որ այս գաղափարները, համաաշխարհային ընտրախավերի շրջանում տարբեր ձևակերպումներով, մշտապես կենսունակ են եղել: Հատկապես վերջին տասնամյակների ընթացքում նեոմալթուսական գաղափարներն ակտիվորեն քարոզվել ու այսպես ասած՝ «մարդասիրական փաթեթի» մեջ մատուցվել են տարբեր հիմնադրամների ծրագրերում ու հայտնի մեծահարուստ գործարարների և անհատ քաղաքական գործիչների հրապարակային ելույթներում ու գնահատականներում: Այստեղ առաջին հերթին խոսքը անգլո-սաքսոնական երկրների ընտրախավերի մասին է, որոնց առաջատար կլանների՝ Ռոքֆելլերների, Ռոթշիլդների, Մորգանների, Հյուզերի և մյուս ցանցավորված ֆինանսատնտեսական ընտանիքների անդամների հայտարարություններում ու գործողություններում, առանձին ծրագրերում և ձեռնարկներում այսօրինակ մոտեցումները առանցքային դեր են խաղում: Բայց առավել զավեշտալին այն է, որ աշխարհի բնակչության թվաքանակը «ձգբրտելու», իրականում զսպելու-սահմանափակելու մոտեցումներն արտացոլված են ամերիկյան կառավարության պաշտոնական փաստաթղթերում, որոնք, որպես կանոն, գաղտնի են պահվում: Դրանցից մեկը ստեղծվել է ԱՄՆ-ում 1974 թվականի դեկտեմբերի 10-ին այսպես կոչված՝ «**Քիսինջերյան զեկույցներ**» շարքի տակ և հայտնի

14 Стів Мальтус. Т.Р., Опыт о законе народонаселения. О препятствиях к размножению населения в наименее цивилизованных странах и в древние времена. http://liv.piramidin.com/politica/maltus_opyt/maltus_opyt.htm#2.

է «Աշխարհի բնակչության աճի հետևանքները ԱՄՆ և արտասահմանյան գործընկերների շահերի տեսանկյունից» անվանումով: Ժամանակին այն ուղղակի սահմանում էր այն ուղենիշներն ու միջոցները, որոնցով պետք է սահմանափակվի զարգացող երկրներում բնակչության աճը, ինչը ոչ ավել, ոչ պակաս՝ «ամերիկյան ազգային անվտանգության լրջագույն սպառնալիք է»¹⁵: ԱՄՆ պետական պաշտոնական փաստաթղթերում այսօրինակ նպատակադրումները բավականին կոռեկտ ձևակերպումներով են շարադրված, իսկ դրանց հիման վրա առաջարկվող լուծումները երրորդ աշխարհի երկրների ու ժողովուրդների նկատմամբ բարյացկամ տոնով են մատուցված:

Սակայն այլ են այս հարցում ընտրախավերի մոտեցումների շեշտադրումները նրանց հիմնադրամների վերլուծական, հետազոտական գեկույցներում և այլ փաստաթղթերում: Այս տեսակետից հատկապես աչքի են ընկնում Ռոքֆելլերների կլանի կողմից 1968 թ. հիմնադրված «**Հռոմի ակումբի**» փաստաթղթերը՝ աշխարհի բնակչության աճի զսպման, բնապահպանական հիմնախնդիրների լուծման, տեխնաժին աղետների բացառման և այլ հիմնախնդիրների վերաբերյալ: Ընդհանրապես, Ռոքֆելլերների հիմնադրամը գլոբալ մասշտաբով մի քանի ռազմավարական ուղղություններով ծրագրեր իրականացնող կառույց է, որը այդ գործի մեջ բազմամիլիարդ ներդրումներ է անում, իհարկե, առաջին հերթին նկատի ունենալով իր կլանային շահերը:

Ռոքֆելլերները արդեն անցյալ դարի 70-ական թվականներին սկսեցին մտնտալ աշխարհը այսպես կոչված՝ «խորքային պետության» մոդելով կառավարելու մասին ու այդ համատեքստում մի շարք գլոբալ ծրագրեր նախաձեռնեցին հենց «Հռոմի ակումբի» միջոցով: Ռոքֆելլերների գլխավոր նախագծերն իրականացվում են՝ քաղաքականության (լոբբինգ, լոգրոլլինգ), քաղաքական առաջնորդների պատրաստման, կրթության (հատկապես համալսարանական ծրագրերի), առողջապահության և գիտության՝ իրենց հետաքրքրող բնագավառների ֆինանսավորման ծրագրերի տեսքով: Մասնավորապես, այս հիմնադրամի սևեռուն հետաքրքրության տիրույթում են կենսատեխնոլոգիաների, վերականգվող էներգետիկայի, արհեստական բանականության և հոգեբանական տեխնոլոգիաների, ինչպես նաև նանոտեխնոլոգիաների մշակման ասպարեզները: Այդ ուղղություններով հետազոտությունները պարբերաբար հրապարակվում են ամփոփիչ ու վերլուծական գեկույցների ու կանխատեսումների տեսքով:

15 Implications of Worldwide Population Growth for U.S. Security and Overseas Interests// National Security Study Memorandum//NSSM 200//THE KISSINGER REPORT, December 10, 1974. Pg. 113-114.
https://pdf.usaid.gov/pdf_docs/Pcaab500.pdf

Մասնավորապես Ռոքֆելլերների հիմնադրամի զեկույցներից մեկը, որը մշակվել է «Բիզնեսի գլոբալ ցանց» կենտրոնի հետ համատեղ, պարզապես ապշեցուցիչ է իր «կանխատեսման» կոնկրետությամբ և այժմեականությամբ, քանի որ ուղղակի առնչվում է թագավարակին ու նրա հնարավոր ազդեցությանը: Տակավին 2010 թվականին պատրաստված ու հրատարակված այս փաստաթուղթը վերնագրված է այսպես՝ «Տեխնոլոգիաներ ապագայի համար և միջազգային զարգացման սցենարներ»¹⁶: 2008–2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից անմիջապես հետո մշակված այս փաստաթուղթը տվյալ պահին աշխարհում ստեղծված վիճակի վերլուծություն և ապագայի կանխատեսում է: Դրանում հիմնադրամի փորձագետները առանձնացրել են զարգացման չորս սցենարներ, ու թվում է, թե դրանք ընդհանուր ու մոտավոր գնահատականներ պետք է լինեին ապագայի վերաբերյալ: **Սակայն իրականում սցենարներից մեկն ուղղակի ներկայացնում ու նկարագրում է այն, ինչին մենք ականատես ու մասնակից ենք վերջին գրեթե մեկ տարվա ընթացքում:**

Ահավասիկ, 2010 թվականին լույս տեսած այդ զեկույցում կարդում ենք. «2012 թ. բռնկվեց խոշորագույն համաճարակ (պանդեմիա), որին աշխարհը սպասում էր երկար տարիներ: Ի տարբերություն H1N1-ի, որը հանդես էր եկել 2009 թվին (խոզի գրիպի մասին է խոսքը – Ա.Մ.), գրիպի այս շտամը, որը տարածվում էր վայրի բաղերի միջոցով, չափազանց վտանգավոր էր: Նույնիսկ մի շարք երկրներ, որոնք նախապես պատրաստվել էին այս համաճարակին, խոցվեցին դրանից, իսկ աշխարհի մասշտաբով այդ բացիլը վնասեց բնակչության 20 տոկոսին, 8 միլիոն մարդ մահացան վարակի հայտնվելու սկզբից առաջին 7 ամիսների ընթացքում, մահացան առավելապես երիտասարդ ու անուր մարդիկ»¹⁷: Իհարկե, այն սցենարը, որ այստեղ նկարագրված է, որոշ տարբերություններ ունի մեր օրերի իրողությունների հետ: Նոր տիպի թագավարակից գլխավորապես մահանում են ոչ թե երիտասարդ ու առողջ, այլ հիմնականում տարեց ու հիվանդ մարդիկ, իսկ թագավարակի ներկա աղբյուրը ենթադրաբար ոչ թե վայրի բաղերն են, այլ չղջիկները կամ օձերը:

Ըստ հիշյալ փաստաթղթի՝ համավարակը իր սուր դրսևորումներով պետք է դադարեր 2020 թ. հուլիս–օգոստոս ամիսներին՝ վարակելով աշխարհի բնակչության 2/3-ին: Հիմնադրամի փորձագետները նաև նկարագրում են վարակի ազդեցությունը տնտեսության վրա. «Համավարակը ջախջախիչ ազդեցություն թողեց նաև տնտեսության վրա. մարդկանց և

16 Scenarios for the Future of Technology and International Development. The Rockefeller Foundation, Global Business Network. May 2010.

<https://www.rockefellerfoundation.org/wp-content/uploads/Annual-Report-2010-1.pdf>

17 Նույն տեղում, էջ 18:

ապրանքների միջազգային տեղաշարժը կանգ առավ, ինչը թուլացրեց գրոսաշրջությունը և խաթարեց միջազգային արժեշրջանները: Նույնիսկ տեղերում փակվեցին աղմկոտ խանութներն ու շուկաները, և գրասենյակները ամիսներով դատարկ էին՝ առանց աշխատակիցների և հաճախորդների»,- ասված է գեկույցում¹⁸:

Պանդեմիայի պայմաններում տիրապետող են դառնում ավելի բարդ տեխնոլոգիաները, որոնք ապահովում են մարդկանց միջև հաղորդակցությունը հեռավար սկզբունքներով, ինչպես նաև անվտանգությունը: Այս իրավիճակում ընդլայնվում է էլեկտրոնային առևտուրը, ինչպես նաև ապրանքների փաթեթավորման ավելի հուսալի համակարգերը¹⁹: Հատկապես նշանակալի է, որ հիմնադրամի փորձագետները այսպես ասած՝ մեկըմեկին նկարագրել են այսօրվա քաղաքական կառավարման իրողությունները: Դրանցից մեկի համաձայն՝ «Շուկայական սկզբունքները հետ են նահանջում, ավելի տիրապետող են դառնում առանցքային ճյուղերի ավելի կոշտ կառավարման սկզբունքները, որոնց հիման վրա հարկադրական միջոցներով կառավարությունները վերականգնել են խզված կապերը: Դա նշանակում է վերևից ներքև առավել կոշտ պետական վերահսկողություն և առավել ավտորիտար կառավարում՝ սահմանափակ նորամուծություններով և քաղաքացիների աճող դիմակայությամբ²⁰», - նշված է գեկույցում:

Եթե ամփոփենք ու համադրենք վերը շարադրվածը, ապա կարելի է եզրակացնել, որ Ռոքֆելլերների հիմնադրամի փորձագետները ապագան ճշգրիտ «կանխատեսելու» բացառիկ «տաղանդ» են դրսևորել: Սակայն իրականում, եթե այստեղ մեջտեղ բերենք այն բազմաթիվ փաստերն ու ենթադրությունները, որ համաշխարհային թագավարակը հարուցած բացիլը՝ **SARS-Cov-2**-ը ոչ թե բնածին, այլ արհեստածին (ըստ երևույթին՝ չարամիտ դիտավորությամբ) ծագումնաբանություն ունի, ամեն ինչ տեղը կընկնի: Դրա հավելյալ հաստատումն է հայտնի **Բիլդերբերգյան** փակ ակումբի մեկ այլ ֆիլանտրոպ անդամ, ոչ անհայտ Microsoft ընկերության սեփականատեր ու աշխարհահռչակ մեծահարուստ **Բիլ Գեյթսի**՝ բացիլների «գծով» գերակտիվության ու այսպես ասած՝ բարեգործական գործունեության փաստը, ինչի արդյունքում ամեն ինչ իր տեղն է ընկնում: Հայտնի է, որ Բիլ Գեյթսը տիկնոջ՝ Լինդայի հետ հիմնադրամ են հիմնել ու վերստին բարեգործություն են անում առողջապահության ոլորտում: Այդ հիմնադրամի նպատակներից մեկը, իհարկե, զարգացող երկրներում մանկական մահացության կրճատումն է և ծնելիության կարգավորումը:

18 Տես նույն տեղում էջ 24-25:

19 Տես նույն տեղում էջ 23:

20 Նույն տեղում էջ 19:

Փաստենք, որ Բիլ Գեյթսը փաստորեն Առողջապահության համաշխարհային կազմակերպության բյուջեի ոչ ավել, ոչ պակաս 30 տոկոսն ապահովող դոնորն է: Ասել կուզի՝ նա այնքան գումար է նվիրաբերում այդ միջազգային կառույցին, որքան գրեթե ամերիկյան կառավարությունը: Սա նոնսենս է, սակայն փաստ է: Հայտնի է, որ Գեյթսը **ID-2020** ծրագրի նախաձեռնողն է, որի համաձայն՝ աշխարհի բոլոր բնակիչները պետք է մինչև 2030 թվականը ունենան իրենց թվանիշը կամ նույնականացման համարը՝ **ID**-ն: Պարզ ասած՝ սա մարդկանց թվային համարակալման (չիպավորման) ծրագիր է, որը առերևույթ նրանց առողջությունը պահպանելու և հիվանդությունների ծագումը կանխարգելելու ծրագիր է: Գեյթսը, սակայն, ավելի շուտ հայտնի է որպես կենսաբանական հետազոտությունների, նոր պատվաստանյութերի ստեղծման ու փորձարկման ծրագրի հարուցողներից ու ակտիվ քարոզողներից մեկը: **Եվ հենց նոր տիպի թագավարակի ստեղծման հետ կապված հետազոտությունների ֆինանսավորողներից մեկն էլ նա է եղել: Այդ հետազոտության հեղինակները եզրակացրել են, որ իրենք սինթեզել են նոր տիպի թագաբացիլ (չղջիկի բջիջների հիմքի վրա), որը կարող է սպառնալ մարդկության անվտանգությանը: Գիտական այս հոդվածը հրատարակվել է ամենահեղինակավոր գիտական THE NATURE ամսագրում 2015 թ. նոյեմբերին²¹:**

3. Թագավարակը, տնտեսական անկայունությունը և երկրների զարգացման հեռանկարը

Ակնհայտ է, որ նոր թագավարակը աննախադեպ չափերով ավելացրել է քաղաքական, տնտեսական և ֆինանսական անկայունությունն աշխարհում: Որքան էլ որ առաջիկայում թագավարակի մահաբեր ուժը թուլանա ու դրա հետևանքով հանվեն տեղաշարժերի ու այլևայլ սահմանափակումների, և երկրները վերադառնան իրենց բնականոն կենսագործության ռեժիմին, իրերի նախկին վիճակը չի լինելու ոչ միայն աշխարհում, այլև երկրների ներսում: Համընդհանուր անվստահությունը, վախը, հոգեբանական լարվածությունը, հնարավոր է դառնան այն ընդհանուր ֆոնը, որոնք պայմանավորելու են առաջիկա տասնամյակի զարգացումները: Այս հանգամանքները խոր ազդեցություն են ունենալու հասարակության կենսագործության բոլոր ոլորտների՝ միջազգային հարաբերությունների ու համաշխարհային ռազմաքաղաքական և տնտեսական ուժի կենտրոնների դիրքավորման, տնտեսության, կրթության, հանրային ա-

21 Աղբյուրը տես <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC4797993/>

ռոջապահության, աշխատանքի ու հանգստի կազմակերպման և այլ բնագավառների վրա:

Անկասկած, Քովիդ-19-ի ազդեցությունները առաջին հերթին դրսևորվելու են երկրների տնտեսական կյանքի երկարաժամկետ փոփոխություններով: Տնտեսական աճի և բարեկեցության բնութագրերի, ռեսուրսների համախմբման ու համակցման, տեխնոլոգիաների ընտրության և զարգացման, մարդու և բնության փոխհարաբերությունների, աշխատանքի պայմանների և զբաղվածության ապահովման, ֆինանսական համակարգի և վճարումների համակարգերի գործողության բազմաթիվ տարրեր ու կառուցվածքներ ենթակա են լինելու նոր՝ պարադիգմալ փոփոխությունների: Լրջագույն փորձությունների առաջ են կանգնելու պետությունների բյուջետային ու ծախսային քաղաքականությունները, պետական պարտքի ձևավորման ու հասարակության բարեկեցության ապահովման համակարգերը:

Արդեն այժմ կան գրեթե միմյանց համընկնող գնահատականներ համաշխարհային տնտեսության թե՛ քանակական և թե՛ որակական աննախադեպ փոփոխությունների վերաբերյալ: Միջազգային ֆինանսական կառույցները, վերլուծական և հետազոտական կենտրոնները համակարծիք են այն բանում, որ համաշխարհային և ազգային տնտեսությունների անկման չափերով ու մասշտաբներով այս ճգնաժամը և անկումը համադրելի են 1930-ական թվականների «Մեծ լճացման» տնտեսական ցնցման հետ: Ահավասիկ, այդպիսի գնահատականներից մեկը տալիս է Արժույթի միջազգային հիմնադրամը, ըստ որի՝ 2020 թ. տնտեսական անկումը կկազմի համաշխարհային համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ավելի քան 3 տոկոսը²²: Այս հեղինակավոր կառույցի փորձագետների գնահատումներով 2020 թ. համաշխարհային տնտեսության գումարային կորուստները կկազմեն ավելի քան 9 տրիլիոն դոլար: Հետաքրքիր է, որ միջազգային փորձագետները ամենախոր ու մեծ անկումը կանխատեսում են զարգացած Արևմուտքի տնտեսությունների համար: Ըստ այդմ՝ ԱՄՆ տնտեսությունը կկրճատվի 5.9 տոկոսով, եվրոպական տնտեսությունները՝ 7.5 տոկոսով, Մեծ Բրիտանիայինը՝ 6.5 տոկոսով, Ճապոնիայինը՝ 5.2 տոկոսով, ռուսական տնտեսության անկումը կկազմի 5.5 տոկոս: Հետաքրքիր է, որ փորձագետները ավելի համեստ անկում են կանխատեսում Չինաստանի և Հնդկաստանի պարագայում, համապատասխանաբար՝ 1.2 և 1.9 տոկոս: Իսկ ընդհանուր առմամբ զարգացող երկրների տնտեսությունների անկումը կկազմի 1 տոկոս²³:

²² Տե՛ս **Gopinath G.** «The Great Lockdown: Worst Economic Downturn Since the Great Depression».

<https://blogs.imf.org/2020/04/14/the-great-lockdown-worst-economic-downturn-since-the-great-depression/>

²³ Տե՛ս նույն տեղիում:

Եթե իրերը կոչենք իրենց անուններով, ապա պարզ է, որ մինչ թագավարակը համաշխարհային տնտեսության նախորդ տասնամյա զարգացումները ոչ մի լավատեսական կանխատեսումների հիմքեր չէին տալիս: 2008–2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո աշխարհը սրընթաց սկսում էր դեպի նոր, ավելի գլոբալ ցնցում: Եվ թագավարակային ճգնաժամի նախօրեին մի շարք տնտեսական ցուցիչներ, հատկապես համաշխարհային պարտքային իրավիճակը փաստում էին, որ փլուզումն անխուսափելի է: Իրականությունն այն է, որ աշխարհն այսօր մի քանի անգամ ավելի շատ է ծախսում, քան ի վիճակի է ստեղծել: **Ասել կուզի, որ կյանքն աշխարհում հիմնված է ... պարտքի վրա:** Դա վերաբերում է ավելի քան 200 երկրների գերակշիռ մեծամասնությանը: Ահավասիկ, մի քանի վիճակագրական տվյալներ: 2019 թ. սկզբին համաշխարհային գումարային արտաքին պարտքը կազմում էր համաշխարհային ՀՆԱ-ի 300 տոկոսը, այսինքն՝ պարտքի մեծությունը ավելի քան երեք անգամ գերազանցում էր ստեղծված համաշխարհային տարեկան արդյունքի մեծությանը²⁴: Թագավարկի պայմաններում, բնականաբար, այդ պարտքը ավելանալու է աննախադեպ չափերով: Տարբեր վերլուծական կենտրոնների գնահատումներով 2020 թ. վերջի դրությամբ այն կարող է հասնել մինչև համաշխարհային ՀՆԱ-ի 350 տոկոսին²⁵: Հատկապես խնդրահարույց է այն երկրների պարտքային իրավիճակը, որոնք համակարգաստեղծ դերակատարություն ունեն համաշխարհային տնտեսության մեջ: Խոսքը առաջին հերթին ԱՄՆ-ի մասին է, որի արժույթը՝ ամերիկյան դոլարը, շարունակում է համաշխարհային ռեզերվային արժույթի դերակատարություն ունենալ:

Մի առիթով ամերիկյան բանկային գործի արքաներից մեկը՝ **Դեյվիդ Ռոքֆելլերը**, ասել է, «Տվեք ինձ պետության փողը տպելու հնարավորություն, և այդ ժամանակ նշանակություն չի ունենա, թե ովքեր են ընդունում օրենքները»: Այդ հնարավորությունը, ինչպես հայտնի է, Ռոքֆելլերը և ամերիկյան խոշոր կապիտալի մյուս գուրուները ունեն: Խոսքը ԱՄՆ-ի դաշնային պահուստային համակարգի մասին է, որը 12 մասնավոր բանկերից բաղկացած համակարգ է, և որին օրենքով վերապահված է իրավունք՝ իրականացնել ամերիկյան արժույթի՝ դոլարի թողարկման ու շրջանառության կարգավորման գործառույթը: Ու այդ իրավիճակը պահպանվում է ավելի քան 100 տարի՝ սկսած 1913 թ. ընդունված մի օրենքից:

Համաշխարհային տնտեսության մրցահարթակում հանդես է եկել նոր, հզոր խաղորդ՝ հանձին Չինաստանի, որի տպավորիչ թռիչքը վերջին երեք տասնամյակների ընթացքում նրան ընդհուպ մոտեցրել է ԱՄՆ-ին ու դարձրել լուրջ ախտյան: Մյուս կողմից, ամերիկյան տնտեսությունը ամենևին լավ

24 Տե՛ս <https://ru.wikipedia.org/wiki>

25 Տե՛ս <https://russian.rt.com/business/article/735389-mirovoj-dolg-rost-rekord>

Ժամանակներ չի ապրում. երկրի պետական պարտքը գերազանցում է ՀՆԱ-ն մոտ 10 տոկոսով, մյուս կողմից դուլարը ավելի ու ավելի է գիջում դիրքերը, որպես պահուստային վճարամիջոց: Մինչդեռ այն գործոնները, որոնք որոշելու են զարգացումների առաջիկա տասնամյակի թրենդը, իհարկե նորագույն տեխնոլոգիաներն են, ի դեմս՝ նանո-, բիո-, ինֆո- և կոգնո- տեխնոլոգիաների (դրանք այսպես կոչված՝ **NBIC**-տեխնոլոգիաներն են): Տեխնոլոգիաների այս փունջը ակնհայտորեն զարգանում է փնջակապի ձևով՝ ձեռքձեռքի տված, այսպես ասած՝ փոխկապակցված ու փոխապայմանավորված, որի էֆեկտները լինելու են աննախադեպ: Նրանք, ովքեր կկարողանան ստեղծել ու զարգացնել այդ տեխնոլոգիաները, առևտրայնացնել դրանք ու վերածել բիզնես մոդելների, ասել է թե՛ մրցունակ ու բացառիկ ապրանքների և ծառայությունների, արդիական գենքերի, կարող են հավակնել ինչպես շուկայի, այնպես էլ գլոբալ քաղաքականության գլխավոր դոմինանտի դերակատարությանը:

Ոմանք այսօր նույնիսկ խոսում են թվային աշխարհակարգի, թվային գեոկառավարման, թվային անվտանգության համակարգերի գոյացման ու զարգացման մասին: Խնդիրն այն է, թե ինչպես պետք է գործեն այդ համակարգերը, որոնք հիմնված կլինեն արդարության սկզբունքների վրա: Այն-հայտ է, որ անցումը նոր՝ թվային աշխարհակարգի չափազանց ծախսատար ու բարդ գործընթաց է լինելու: Արհեստական ինտելեկտի վրա հիմնված տեխնոլոգիաները, բնականաբար, գործազրկության մեծ ալիք են առաջացնելու և ստիպելու են զարգացնել գործազուրկ դարձած միլիոնավոր մարդկանց ուսուցման ու վերապատրաստման համակարգերը:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները և փոխկապակցված ցանցերը, որոնց հիման վրա գործում են ֆինանսական վճարումների, տարատեսակ բորսայական գործարքների, ապրանքների, ծառայությունների տեղաշարժի համակարգերը, ըստ էության վիթխարի թռիչք են ապահովել ազգային և գլոբալ տնտեսություններին: Սակայն նաև առաջացրել են ռիսկեր: Մասնավորապես այն տեխնոլոգիաները, որոնք կապված են բլոկչեյն համակարգերի և դրանց հիման վրա գործող կրիպտոարժույթների ստեղծման ու գործածության հետ, իսկական գլխացավանք են դարձել ավանդական ֆինանսաբանկային համակարգերի համար: Այս տեսանկյունից լրջագույն խնդիրներ է բախվել ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը, և այդ ֆոնին լուրջ խնդիրներ են առաջացել դուլարի՝ որպես պահուստային արժույթի հետագա գործածման հնարավորությունների հետ կապված: Տեղեկություններ կան, որ Չինաստանը արդեն գործարկում է էլեկտրոնային փողի իր համակարգը, որը գործելու է ինքնաշխատ եղանակով և կարող է օգտագործվել նրա հետ առևտուր անող մյուս գործընկեր երկրների կողմից: Ստացվում է, որ այսպիսի համակարգերը կարող են գոր-

ծել սկզբունքորեն քիչ թե շատ զարգացած երկր- ներում, ինչը այլևս կնշա- նակի համաշխարհային միասնական վճարահաշվարկային համակարգի կազմալուծում: Ուստի առաջանում է նույն ճակատագրական հարցը՝ ի՞նչ անել:

Ըստ երևույթին, համաշխարհային փողերի «տիրակալները» (այս- պես անվանենք մեծահարուստ կլաններին), որոշել են փորձարկել այն սցենարը, որ նկարագրել են Ռոքֆֆելլերի հիմնադրամի փորձագետները իրենց վերը նկարագրած տարբերակով, այն է՝ պատկերավոր ասած՝ «ջի- նը» բաց թողնել սափորից: Տվյալ դեպքում ջինի գործառույթը կատարում է թագաբացիլը՝ SARS-MERS-Cov-19-ը: Սա նշանակում է շատ ուժեղ ցնցում բոլորի համար, որը կկասեցնի թափ հավաքածներին ու արագորեն առաջ սկսողներին, որոնք հավակնում են տապալել համաշխարհային առաջ- նորդին (հեգեմոնին)՝ ԱՄՆ-ին: Իհարկե, ինչ-որ տեղ սա պարզունակ սցե- նար կարող է դիտվել, սակայն, ո՞վ կարող է հերքել այն փաստը, որ հա- մաշխարհային քաղաքականության ասպարեզում խոշոր կապիտալի սե- փականատերերը՝ հայտնի ընտանիքներն ու կլանները, շարունակում են ի- րենց ձեռքում պահել գլոբալ համակարգերի կառավարման հիմնական լծակները: Այստեղ կարևոր է նկատի ունենալ ոչ միայն ԱՄՆ-Չինաստան գլոբալ դիմակայությունը, այլև ներագգային զարգացումները: Ակնհայտո- րեն առաջիկա տասնամյակում տեղի է ունենալու միաբևեռ ու խիստ ան- կայուն աշխարհակարգից անցում բազմահարթակ աշխարհակարգի: Այդ անցումը, ինչպես երևում է, լինելու խիստ ցավոտ, կորստաբեր ու ցնցում- ներով լի բոլոր երկրների, այդ թվում՝ արդիականացման ու լճացման սահ- մանագծին տարուբերվող Հայաստանի Հանրապետության համար:

7. Թագավարակը, պատերազմը և Հայաստանը

Վերը ներկայացված գլոբալ զարգացումների համապատկերին թե՛ Հա- յաստանում և թե՛ Արցախի շուրջ տեղի ունեցող զարգացումները ներկայա- նում են նոր լույսով: Այն, որ Հայաստանի Հանրապետությունը վերջին մեկ տարվա ընթացքում ծանրագույն կորուստներ է կրել, սկզբում համավա- րակի, իսկ այնուհետև՝ անցյալ տարվա սեպտեմբերին, Արցախի ու ՀՀ դեմ թուրք-ադրբեջանական տանդեմի կազմակերպած ռազմական ագրեսիայի հետևանքով, այլևս անհերքելի իրողություն է:

Տստեսության պերմանենտ արգելափակումը, գործարարության ու մարդկանց տեղաշարժերի սահմանափակումները հսկայական տնտեսա- կան վնասներ են պատճառել: Պաշտոնական գնահատականներով՝ 2020 թ. 11 ամիսներին ՀՀ ՀՆԱ անկումը կազմել է 7,2 տոկոս: Հատկապես մեծ անկում են գրանցել շինարարությունը (11,2 տոկոս), առևտրի ոլորտը (13.5

տոկոս), ծառայությունների ոլորտը (13,6 տոկոս)²⁶: Մարդկանց տեղաշարժերի, երկրից ելքի սահմանափակման պատճառով կասեցվել են արտերկիր արտագնա աշխատանքի հնարավորությունները, ինչի հետևանքով ավելի քան 20 տոկոսով կրճատվել են արտասահմանից Հայաստան մտնող մասնավոր դրամական փոխանցումները²⁷: Ստեղծված իրավիճակում ՀՀ կառավարությունը ստիպված է եղել 2020 թ. մարտ-հոկտեմբեր ժամանակահատվածում իրականացնել ՀՀ բիզնեսի և տնային տնտեսությունների, ինչպես նաև սոցիալական ոլորտի երկուսուկես տասնյակ ֆինանսական օժանդակության ծրագրեր, որոնց աղբյուրները հիմնականում արտաքին բնույթի են: Իսկ ընդհանուր առմամբ այդ միջոցառումները էապես ավելացրել են երկրի պետական պարտքը:

Ըստ ՀՀ Կենտրոնական բանկի կանխատեսումների՝ երկրի բյուջետային իրավիճակի կտրուկ վատթարացման հետևանքով ՀՀ բյուջեի պակասուրդը տարվա արդյունքներով անսխալադեպ բարձր՝ ՀՀ ՀՆԱ 6.2 տոկոս մակարդակի կհասնի: Մրա հիմնական պատճառները ինչպես համավարակի պայմաններում տնտեսության անկման, այնպես էլ պատերազմի պատճառով աճած ռազմական ծախսերի ավելացման բացասական ազդեցություններն են: Բնականաբար, տնտեսական ակտիվության կտրուկ նվազումը էապես կրճատել է պետական բյուջեի հարկային եկամուտները, մինչդեռ ծախսերը էապես աճել են: Ըստ ՀՀ ԿԲ տվյալների՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտները տարեկան կտրվածքով կրճատվել են 2 տոկոսով (մեկ տարի առաջվա 19,2 տոկոս աճի դիմաց)՝ կազմելով 2,573 մլրդ դոլար, մինչդեռ ծախսերը կտրուկ արագացրել են աճը 10,2 տոկոսից մինչև 19,8 տոկոս՝ կազմելով 2,998 մլրդ դոլար: 44-օրյա պատերազմի արդեն 11-րդ օրը ՀՀ կառավարությունը վերանայեց պետական բյուջեն և պետական ծախսերն ավելացրեց 40 միլիարդ դրամով²⁸: Բերված տվյալները վկայում են, որ Հայաստանի պետական ֆինանսների վիճակը կտրուկ վատացել է հատկապես Արցախյան պատերազմի ժամանակահատվածում աճած ռազմական ծախսերի հետևանքով: Տարբեր գնահատումներով՝ պատերազմի հետևանքով երկրի կրած միայն նյութական կորուստները գերազանցում են 2 միլիարդ դոլարը:

Հայաստան աշխարհը և Արցախը պատուհասած երկու մեծագույն չարիքները՝ պատերազմը և թագավարակը, 2020 թվականի ընթացքում ահռելի վնասներ ու կորուստներ պատճառեցին հայությանը: Ակնհայտ է, որ դրանք նաև ներքին՝ քաղաքական, տնտեսական սոցիալական ու ինստիտուցիոնալ պատճառներ ունեն, պայմանավորված երկրի ընտրախավերի

26 Տես աղբյուրը՝ <https://www.armstat.am/file/doc/99522818.pdf>:

27 Տես աղբյուրը՝ <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>:

28 Տես աղբյուրը՝ <https://www.gov.am>:

մի զգալի հատվածի՝ տասնամյակներ տևած անպատասխանատու, շատ դեպքերում՝ հակաազգային, կոռուստային վարքագծով ու մեկը մյուսին հաջորդած իշխանությունների, այդ թվում՝ վերջին՝ 2018 թ. իշխանափոխության հետևանքով ձևավորված կառավարության կոպտագույն սխալներով ու բացթողումներով: Այն, որ վերջին տասնամյակների ընթացքում բոլոր տիպի իշխանությունների խոստումների ու հռչակագրերի, ծրագրային ու փաստաթղթային արձանագրումների և փաստացի գործերի ու իրականացրած քայլերի միջև ահռելի անջրպետ է եղել, ու դա հանգեցրել է մեծագույն կորուստների, այլևս անվիճելի փաստ է: Սրան շատ դեպքերում նպաստել է հասարակության մեծ մասի կրավորական կեցվածքը, կրթածության, իրազեկվածության, օրինահպատակության և հարկահպատակության մշակույթի ցածր մակարդակը, նեղընտանեկան ու կլանային շահերից վեր բարձրանալու և համազգային շահերով առաջնորդվելու շահադրդումների պակասը, իսկ հաճախ էլ՝ բացակայությունը: Այդ պատճառով նման իրավիճակի հաղթահարումը տևական ջանքեր ու մարդկային մեծ ներդրումներ է պահանջելու:

Ատոմ Շ Մարգարյան – զբաղվում է նորարարական և տեխնոլոգիական փոփոխությունների ազդեցությունների գնահատման, տնտեսության արդիականացման և դրա ինստիտուցիոնալ ապահովման հիմնախնդիրների ուսումնասիրություններով: Հեղինակ է երեք մենագրությունների և 85 գիտական հոդվածների:

Summary

ARMENIA ON THE DEFINITIVE BORDER OF MODERNIZATION AND FILLING

Retrospective economic and political comparisons in the
context of the Second Artsakh War

Atom Sh. Margaryan

Candidate of Sciences in Economics

Key words – modernization, stagnation, coronavirus, war, liberal reforms, military expenses, global world, material losses, investments.

2020 was, by far, one of the most turning and fatal years of the millennium of the permanent flow of Armenian history. The plague that started at the beginning of the year and turned into a global evil from March (COVID-19), which was a destructive and deadly threat to human lives and the normal life of the country, hit Armenia with all its might. At first, the underestimation of that great threat by the Armenian “velvet” authorities and the unimpeded spread of the fire because of it, and then the application of panic and monstrous restrictions by the same authorities was just ridiculous. At the same time, 2020 had much more terrible and destructive consequences. The large-scale Azeri-Turkish attack on the entire front of Artsakh on September 27 and the 44-day heavy war that followed, which led to heavy losses – human, territorial, military-technical, communication, etc. The article is dedicated to the analysis of the effects of these two crucial factors.

The article develops the provision according to which the 30-year history of the newly independent Republic of Armenia is, in fact, a story of imitation of the reforms aimed at modernizing the institutional and economic systems of the country and, ultimately, their failure. In fact, the country's elite-guided and anti-national electoral elites have not been able to create emerging security, diplomatic, legal-political and economic emerging systems capable of withstanding external and internal challenges and crises. This is confirmed by its continuous social and economic failures, and, finally, by the heavy defeat suffered by the country after the Second Artsakh War, with huge territorial and human losses.

According to the study reflected in the article, the main determinants of the behavior of the ruling elites of the Third Republic of Armenia were based not on the realization of national interests, visions of strategic development and realistic and viable programs anchored on them, but on corrupt groups in practice. In fact, one and a half dozen successive governments in the country have served the interests of these groups and their paramilitaries, regardless of the areas in which

decisions are made, their implementation, the rule of law, defense, security systems and the military, economic resources, income distribution, goods or social policy. The main precondition for success in politics, advancement in the public service, and significant income in business and economic transactions over the past decades has been for people to be loyal to the top leaders of the highest bureaucracy, to serve this or that leader, to be part of the government, and so on.

The above-mentioned realities and factors have overwhelmed the reforms in Armenia for decades, and instead of modernization and development, the society has witnessed stagnation and failures. As a result, the country has not been able to accumulate sufficient resources over time, both in terms of neutralizing external military threats and effectively enduring other emergencies, on the contrary, it has largely squandered the existing and previously accumulated development potential. As a result, corruption, illegality, mass violations of human and civil rights flourished, the income and property burden of the society, poverty and emigration expanded and deepened.

Резюме

АРМЕНИЯ НА ГРАНИ МЕЖДУ МОДЕРНИЗАЦИЕЙ И ЗАСТОЕМ

Ретроспективные сопоставления на фоне пандемии и
второй Арцахской войны

Атом Ш. Маргарян

Кандидат эконом. наук, доцент

Ключевые слова – модернизация, застой, коронавирус, война, либеральные реформы, военные расходы, глобальный мир, материальные потери, инвестиции.

2020 год был, пожалуй, одним из самых переломных и судьбоносных в потоке тысячелетий истории Армении. Начавшаяся в начале года и с марта превратившаяся в глобальное бедствие эпидемия (COVID-19), которая была разрушительной и смертоносной угрозой человеческим жизням и нормальному жизненному укладу стран, со всей силой ударила и по Армении. Сначала недооценка этого большого бедствия армянскими «бархатными» властями и беспрепятственное распространение эпидемии из-за этого, затем применение теми же властями панических и чудовищных ограничений было просто курьезом. Вместе с этим гораздо более страшные и разрушительные последствия имела 44-дневная война, начавшаяся широкомасштабным азербайджано-турецким наступлением 27 сентября 2020 г., что привело к тяжелейшим потерям – человеческим, территориальным, военно-техническим, коммуника-

ционным и т. д. Статья посвящена анализу влияния этих двух судьбоносных факторов. В статье развивается тезис, что 30-летняя история обретшей независимость Республики Армения, по сути, является историей имитации реформ, направленных на модернизацию институциональных и экономических систем страны, и в конечном счете их провала. То, что антинациональные элиты, руководствующиеся деформированной шкалой ценностей, так и не сумели сформировать взаимосвязанные и взаимодополняющие безопасные, дипломатические, политико-правовые и экономические эмерджентные системы, способные противостоять внешним и внутренним вызовам и кризисным ситуациям, подтверждается перманентными социальными и экономическими провалами и, наконец, тяжелейшим поражением во второй Арцахской войне, огромными территориальными и человеческими потерями.

Согласно отображенному в статье исследованию, главные детерминанты поведения правящих элит РА были основаны не на осознании общенациональных интересов, на идеалах стратегического развития и основанных на них реалистичных и жизнеспособных программах, а на коррупционном поведении и образе действия групп и группировок, захвативших власть фальсифицированными выборами разных уровней и руководимых клановыми интересами. По существу, сменившие друг друга правительства страны обслуживали интересы этих группировок и их главарей независимо от того, к каким сферам относились принятые решения и их выполнение – применению права и закона, обеспечению обороны и безопасности, распределению экономических ресурсов, доходов и благ или социальной политике. Главными предусловиями достижения успеха в политике, продвижения в сфере социальной службы, получения значительных доходов в бизнесе и экономических сделках в течение предыдущих десятилетий были верность руководителям высшей бюрократической пирамиды, угодливое прислуживание им, участие во власти и другие подобные качества.

Отмеченные реалии и факторы в течение десятилетий ограничили реформы в Армении в процессах буксования, и вместо модернизации и развития общество скорее было очевидцем застоя и провалов. В результате с точки зрения как нейтрализации внешних военных угроз, так и продуктивного противодействия другим чрезвычайным ситуациям страна не сумела накопить достаточные ресурсы, а напротив, большей частью растратила и расплыла наличный и накопленный ранее потенциал развития. В результате процветали коррупция, незаконность, массовое попираание прав человека и гражданина, расширились и углубились поляризация общества по доходам и собственности, бедность и эмиграция.

REFERENCES

1. **Dajmond D.**, Ruzh'ja, mikroby I stal': Sud'by chelovecheskix obsh'estv, M., ACT; Corpus, 2010 **(In Russian)**.
2. Dram yev dolar. p'okharzhek'i vark'agitsë 1993-2016 t't'.
<https://www.civilnet.am/news/2016/03/30/dram-dollar-exchange-rate-history/289509>
(In Armenian).
3. HH Sahmanadrut'yun. 1995 t'., <https://www.arlis.am/documentview.aspx?docID=1>
(In Armenian).
4. Korupts'ian Hayastanum. tnayin tntesut'yunneri yev dzemmarkut'yunneri 2009 t'. hetazotut'yun
https://www.crrc.am/wpcontent/uploads/2019/03/2009_Corruption_Survey_Report_Armenian.pdf
(In Armenian).
5. MAK-i Hants'avorut'yan kankhargelman yev k'reakan ardaradatut'yan 13-rd kongres: Korupts'ia: Doha, 13-15 aprili 2015 t'.
https://www.un.am/up/file/Crime%20Congrees_Corruption_Arm_Final.pdf **(In Armenian)**.
6. **Mal'tus T. R.**, Opyt o zakone narodonaselenija. *O prepjatstvijax k razmnozheniju naselenija v naimeneje civilizovannyx stranax I v drevnije vremena*,
http://liv.piramidin.com/politica/maltus_opyt/maltus_opyt.htm#2 **(In Russian)**.
7. **Margaryan A. Sh.**, KORUPTS'IAN HAYASTANUM. Hamakargayin hivandut'yan akhtachanach'umnerë, "Vëm" hamahaykakan handes, Yer., 2010, N 2 (30) **(In Armenian)**.